ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2011 թվականի **թիվ** 826 քաղ. Սանկտ Պետերբուրգ

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը ընդունելու մասին

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց.

1. Ընդունել «Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 013/2011) (կցվում է):

2. Հաստատել Մաքսային միության անդամ պետությունների միջպետական, ազգային (պետական) ստանդարտների ցանկը (մինչեւ միջպետական ստանդարտների ընդունումը), որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011) պահանջների պահպանումը, եւ Մաքսային միության անդամ պետությունների միջպետական, ազգային (պետական) այն ստանդարտների պահանջների պահպանումը (մինչեւ միջպետական ստանդարտների ընդունումը), որոնք

պարունակում են «Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության Տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Հաստատել, որ՝

3.1. «Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության Տեխնիկական կանոնակարգն (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2012 թվականի դեկտեմբերի 31-ից.

3.2. Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք) մինչեւ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց 2014 թվականի հունիսի 30-ից ոչ ուշ: Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ

պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում.

3.3. մինչեւ 2014 թվականի հունիսի 30-ը թույլատրվում է Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան արտադրանքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

3.4. սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ պատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած եռամսյա ժամկետում այն ներկայացնել Հանձնաժողովի՝ սահմանված կարգով հաստատմանը:

5. Ղազախստանյան կողմին՝ Կողմերի մասնակցությամբ ստանդարտների

կիրառման արդյունքների դիտանցման հիման վրա, ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված Ստանդարտների ցանկի թարմացման վերաբերյալ առաջարկությունները նախապատրաստելը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած տարին մեկ անգամից ոչ պակաս դրանք Հանձնաժողովի քարտուղարություն ներկայացնելը՝ Հանձնաժողովի՝ սահմանված կարգով հաստատման համար:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացման համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմինները, եւ տեղեկացնել Հանձնաժողովին դրա մասին.

6.2. ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման ամսաթվից 15 օր հետո, եթե այդ ժամկետի ընթացքում Կողմերը չհայտարարեն Տեխնիկական կանոնակարգին իրենց հավանություն տալը կասեցնելու մասին:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**